


ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
ՍՐԲՈՅ ԹԻՒ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՄԿԻՋԲԵՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ՔԱՀԱՆԱՅՆ – Յանուն Հօր **†** եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենցց. ամէն:

Տարածեալ զձեռն՝ ասէ ի ձայն.

Վասն սրբուհոյ Աստուածածնին, Տէր, ընկալ՛ զաղաչանս մեր եւ կեցո՛ղ զմեզ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Սուրբ զԱստուածածնին եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկին, զի կամեցեալ ողորմեսցի եւ գրացեալ կեցուցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ղ եւ ողորմեա՛:

ՔԱՀԱՆԱՅՆ - Ընկալ՛, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի Միածնի Որդւոյ քոյ եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց (եւ որոց այսօր է յիշատակ կա՞մ եւ աւուրս շնորհիւ), լուր՛ մեզ, Տէր, եւ ողորմեա՛. ներեա՛, քաւեա՛ եւ թող զմեղս մեր: Արժանատրեա՛ գոհութեամբ փառատրել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ձեռնամած խոնարհեալ՝ ասէ.

Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհոյ Աստուածածնին եւ առաջի ամենայն սրբոց եւ առաջի ձեր, հարբ եւ եղբարք, զամենայն մեղս՝ զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով եւ ամենայն մեղօք՝ զոր գործեն մարդիկ. մեղայ՛, մեղայ՛: Աղաչեմ զձեզ, խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ողորմեսցի քեզ Աստուած, հօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս, եւ յառաջակալէն փրկեսցէ զքեզ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս եւ հանգուցէ զքեզ ի հանդերձեալ կեանս:

Խաչակնքեսցէ զժողովորդն՝ ասելով.

ՔԱՀԱՆԱՅՆ - Ամէն: Ազատեսցէ **†** եւ զձեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենայն յանցանս ձեր: Տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս: Ողղեսցէ եւ զառաջկալ կեանս ձեր, շնորհօք սուրբ Հոգւոյն, հօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաիտեանս:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ամէն: Յիշեսցի՛ր եւ զմեզ առաջի անմահ Գառիկն Աստուծոյ:

ՔԱՀԱՆԱՅՆ - Յիշեալ յիջիք առաջի անմահ Գառիկն Աստուծոյ:

Սաղմոս ԽԲ.

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

ՍԱՐԿԱԻԱԳՆ - Գառ արա ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղատրէ, նենգատրէ, փրկեա՛ զիս:

ՍԱՐԿԱԻԱԳՆ - Գու Աստուած, հօրիչ իմ ես. ընդէ՛ր մոռացար զիս, ընդէ՛ր տրտում զնամ ես ի նեղել թշնամոյ իմոյ:

ՔԱՀԱՆԱՅՆ - Առաքեա՛, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

ՍԱՐԿԱԻԱԳՆ - Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

ՔԱՀԱՆԱՅՆ - Խոստովան եղեց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:

ՄԱՐԿԱՒԱԳՆ - Արդ, ընդդէմ տրտում ես անձն իմ, կամ ընդդէմ խռովեալ զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

ՔԱՀԱՆԱՅՆ - Փառք Հօր Դ եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՄԱՐԿԱՒԱԳՆ - Այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:
Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեցոյր: Օրհնեցոյր զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղոջ փառաբանութեան եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Տարածեալ զձեռս՝ ելցէ ընդ աստիճանս, եւ համբորեցէ զսեղանն ասելով.

Ի յարկի սրբութեան եւ ի տեղոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող

- զՏնօրէնութիւնդ քո
- կամ զԱստուածայայտնութիւնդ քո
- կամ զՅայտնութիւնդ քո
- կամ զԳալուստդ քո քառանօրեայ ի տաճարն
- կամ զՄարդեղութիւնդ քո, ի տօնի Աւետման Մօր քոյ եւ Կուսի
- կամ զԳալուստդ քո յԵրուսաղեմ
- կամ զՅարութիւնդ քո
- կամ զՀամբաճումնդ քո
- կամ զԳալուստ Հոգւոյն Սրբոյ
- կամ զՏէրութիւնդ Ամենասուրբ Երրորդութեանդ
- կամ զՊայծառակերպութիւնդ քո
- կամ զԳալուստդ քո ի Փոխումն Մօր քո եւ Կուսի
- կամ զՏէրութիւնդ քո, ի տօնի Ծննդեան Մօր քո եւ Կուսի
- կամ զՅարութիւնդ քո, ի տօնի Ծննդեան Մօր քո եւ Կուսի
- կամ զԽաչդ քո
- կամ զՏէրութիւնդ քո, ի տօնի Ընծայման Մօր քո եւ Կուսի
- կամ զՅարութիւնդ քո, ի տօնի Ընծայման Մօր քո եւ Կուսի
- կամ զՏէրութիւնդ քո, ի տօնի Անարատ Յղութեան Մօր քո եւ Կուսի
- կամ զՅարութիւնդ քո ի տօնի Անարատ Յղութեան Մօր քո եւ Կուսի
- կամ զԾնունդդ քո

օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քեզ մատուցանեմք, զօրհնութիւն եւ զփառս, ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Առեալ զնշխարն դնէ ի մաղզմայն ասելով Ի ծածուկ.

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Առեալ զգինին՝ արկանէ խաչանիչ ի սկիհն, ասելով .

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Ապա սասացէ ի ծածուկ գաղօթս Յովհաննու Ոսկերերանին.

Աստուած, Աստուած մեր, որ զերկնատր հացդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ եւ կեցուցիչ եւ բարերար՝ օրհնել եւ սրբել զմեզ: Ինքնին դու, Տէր, օրհնեա՛ ի եւ այժմ զառաջադրութիւնս զայս: Ընկա՛լ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա՛ որպէս բարերար եւ մարդասէր՝ զմատուցողս եւ վասն որոց մատուցանի, եւ զմեզ անդատապարտ պահեա՛ ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց: Ձի սուրբ եւ փառատր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր **Ի** եւ Որդոյ եւ Հոգւոյդ սրբոյ՝ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ

Ապա համբորեալ զսեղանն՝ ի ձայն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնեալ թագաւորութիւնն Հօր **†** եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ընթեռնու զժամանուտն ըստ պատշաճի .

†

Ապա Սրկաազն ասէ.

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Եւ եւս յաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ՛, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

Համբորեալ զսեղանն՝ դարձցի եւ խաչակնքեսցէ զժողովորդն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնութիւն եւ փառք Հօր **†** եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Խաղաղութիւն ք ամենեցուն:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Եւ ընդ հոգւոյդ քում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուծոյ երկրպագեսցուք:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Առաջի քո, տէր:

Տարածեալ զձեռս՝ ասասցէ ի ձայն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է եւ զթութիւնդ անբաւ, դու ըստ առատ մարդասիրութեան քում նայեա՛ ի ժողովորդս քո եւ ի տաճարս յայս սուրբ: Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Ձի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ի ծածուկ.

Որ հասարակաց զայս եւ միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, եւ զերկուց եւ զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգեւել խոստացար: Դու եւ այժմ զժառայից քոց խնդրուածս՝ առ ի յօգուտն կատարեա՛, շնորհելով մեզ յայսմ յաիտենից զգիտութիւն քումդ ճշմարտութեան, եւ ի հանդերձեալն զկեանսն յաիտենականս պարգեւելով: Ձի բարերար եւ մարդասէր ես, Աստուած, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց ի սպասատրութիւն փառաց քոց: Արա՛ եւ այժմ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց հրեշտակաց, եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից քումդ բարերարութեան:

Ձեռնամած ի ձայն.

Ձի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաիտեանս. ամէն:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Պոսխիւմմէ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,

Խաչի, Եկեղեցոյ , Սրբոց տօնից, Պահոց.

որ խաչեցար վասն մեր,

Յինանց, Կիրակամտից եւ Կիրակէից.

որ յարեար ի մեռելոց,

Ծննդեան Տեսն եւ Յայտնութեան..

որ ծնար եւ յայտնեցար,

Տնօրէնութեան, Անտման..

որ մարմնացար վասն մեր,

Տեսնընդառաջին, Ծաղկազարդին եւ Աւագ ԲՇ. ԳՇ. ԴՇ. ԵՇ.

որ եկիր եւ գալոցդ ես,

Համբարձման..

որ համբարձար փառօր առ Հայր,

Հոգեգալստեան..

որ առաքեցեր զՀոգիդ քո սուրբ յԱռաքելսն,

Վարդավառին..

որ յայտնեցար ի Թարոր լերինն,

Վերափոխման..

որ եկիր ի փոխումն Մօր քոյ եւ Կուսի,

ողորմեա՛ մեզ:

Ձոյգ ընդ սմին՝ ասասցէ ի ծածուկ.

Աստուած սուրբ, որ ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնի սերովբէք գովեն զքեզ, եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրութիւնքն քեզ երկիր պագանեն:

Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս: Որ արարեր զմարդն՝ ըստ պատկերի քում եւ նմանութեան, եւ ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, եւ ուսուցեր խնդրել զհմաստութիւն եւ զգոօնութիւն. եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եղիր ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան:

Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ եւ զանարժան ծառայքս քո ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, եւ զօրինաոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել քեզ:

Դու, Տէր, ընկալ ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, եւ պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ:

Թող մեզ զամենայն յանցանս մեր՝ զկամայ եւ զակամայ: Սրբեա՛ զհոգի, զմիտս եւ զմարմինս մեր. եւ շնորհեա՛ ի սրբութեան պաշտել զքեզ՝ զամենայն աւուրս կենաց մերոց. բարեխօսութեամբ սրբուհոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան: Չի սուրբ ես, Տէր Աստուած մեր, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բազկատարած ասասցէ ի ծածուկ.

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, եւ ողորմեսցիս՝ ըստ մեծի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեալ՝ ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ:

Ձեռնամած ի ձայն.

Ձի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած գոլով. եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենցոց. եմէն:

Ասացեալ ըստ խորհրդոյ ատուրն զՍաղմոսն, ընթերցցի զԳիրսն Առաքելական:

†

Ապա զատուր պատշաճի զԱլեկու.

Ալէլուիա. ալէլուիա: ...: Ալէլուիա:

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Օրթի:

ՔԱՀԱՆԱՅՆ - Խաղաղութիւն † ամենեցուն:

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Եւ ընդ հոգւոյդ քում: Երկիւղածութեամբ լուարուք:

ՔԱՀԱՆԱՅՆ - Սրբոյ Աւետարանիս որ ըստ †

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Փառք քեզ, Տէր Աստուած մեր: Պոսխումէ: Ասէ Աստուած:

Տեառնագրեալ զինքն, ընթերցցի զԱւետարանն,

ՔԱՀԱՆԱՅՆ - † † ...

Եւ յաարտելն համբուրեալ եւ խփեալ՝ դարձցի առ խորանն:

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

ՔԱՀԱՆԱՅՆ - Հաւատամք ի մի Աստուած՝:

Ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի՝ երեւելեաց եւ աներեւոյթից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն սրբով: Որով էառ մարմին, հոգի եւ միտք, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ ատուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որոյ թագաւորութեանն՝ ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն: Որ յօսուցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն յընդհանրական եւ յառաքելական սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն՝ յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանսն յաիտենից, հոգւոց եւ մարմնոց: Յարքայութիւնն երկնից. եւ ի կեանսն յաիտենականս:

Համբուրեալ զսեղանն՝ տեսնագրեցէ զհերն, ասելով զԼուսաորչին ի ձայն.

Իսկ մեր փառաորեսցուք՝ որ յառաջ քան զյախտեանս՝ երկիր պագանելով սրբոյ Երրորդութեան եւ մի Աստուածութեան՝ Հօր **†** եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենցց. ամէն:

Տարածեալ ձեռք սասացէ ի ծածուկ.

Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստո՞ն, որ մեծդ եւ ողորմութեամբ եւ առատ պարգևօք բարերարութեան քոյ: Որ դու քոյին կամաւ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի եւ մահո՞, յաղագս մեղաց մերոց, եւ պարգևեցեր առատապէս զպարգևս Հոգոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա՛ եւ զմեզ, Տէր, աղաչենք զքեզ՝ աստուածային պարգևացդ, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգոյդ սրբոյ:

Ձեռնամած, խաչակնքեցէ ի ձայն.

Որպէս զի արժանատրք եղիցուք գոհութեամբ փառաորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգոյդ, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից. ամէն:

Խաղաղութիւն \neq ամենեցուն:

ՄՊԱՍԱԻՈՐՆ - Եւ ընդ հոգոյդ քում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուծոյ երկրպագեսցուք:

ՄՊԱՍԱԻՈՐՆ - Առաջի քո, Տէր:

Տարածեալ զձեռս.

ՔԱՀԱՆԱՅՆ - Խաղաղութեամբ քով, Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո՛ զմեզ եւ աներկիւղ պահեա՛ յամենայն չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգով եւ ճշմարտութեամբ քեզ երկիր պագանեն: Վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ, եւ յախտեանս յախտենցց. ամէն:

Տեսնագրեցէ զհերն.

Օրհնեալ \dagger Տէր մեր Յիսուս Քրիստոս:

ՄՊԱՍԱԻՈՐՆ - Ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Տէր Աստուած օրհնեցէ \neq զամենեսեանդ:

ՄՊԱՍԱԻՈՐՆ - Ամէն:

Ձեռնամած խոնարհեցուցեալ զգլխին, զձեռս յեցուցէ ի ծնօտ սեղանոյն եւ աղօթեցէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Ոչ որ արժանի է յըմբռնելոցս մարմնատր ախտիք եւ ցանկութեամբ մատչել ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ եւ ահաւոր երկնատր զօրութեանդ իսկ է: Մակայն վասն անչափ բարերարութեանդ քոյ, անպարագրելի Բանդ Հօր, եղեր մարդ, եւ քահանայապետ մեր երեւեցար: Եւ իբր Տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան եւ անարիւն զենման

զբահանայութիւն աւանդեցեր մեզ: Վասն զի դու եւ Տէր Աստուած մեր, որ տիրես երկնատրագ եւ երկրատրագ: Որ ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս՝ սերովբէից Տէր եւ թագաւոր Իսրայելի: Որ միայն սուր ես, եւ ի սուրբս հանգուցեալ:

Աղաչեմ զքեզ, միայն բարերար եւ հեշտայուր, նայեա՛ յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս քո, եւ սրբեա՛ զհոգի եւ զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին: Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զբահանայական շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, եւ քահանայագործել զքո անարատ մարմինդ եւ զպատուական արիւնդ:

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, մաղթեմ՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից քոց:

Այլ արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս զայս՝ յինէն ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես՝ որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս, Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք՝ հանդերձ անսկիզբն Հարբդ, եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ընծայքն վերաբերեցին ի սեղանն եւ Քահանայն լուսացէ զմատունսն ի ձախ եղջեր ասելով.

Լուսցայց սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով:

Ապա վերացուցեալ զքօղն եւ զկափարիչն եւ կալեալ զսկիհն նուիրեցէ ի ծածուկ.

Տէր Աստուած զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զընասս ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ զմեր հողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս՝ այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիսս, ընկալ՝ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս, եւ աւարտեա՛ զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան Միածնի քոյ: Դեղ թողութեան մեղաց պարգեւեա՛ ճաշակողացս՝ զհացս զայս եւ զբաժակս:

Ձեռնամած ի ձայն.

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեսնն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր, միանգամայն եւ Հոգւոյդ սրբոյ՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Համբորեալ զսեղանն խաչակրեսցէ զժողովորդն.

Իտաղաղութիւն ք ամենեցուն:

ՄՊԱՍԱԽՈՐՆ - Եւ ընդ հոգւոյդ քում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուծոյ երկրպագեցուք:

ՄՊԱՍԱԽՈՐՆ - Առաջի քո, Տէր:

ՔԱՀԱՆԱՅՆ - Ողջոյն սուր միմեանց, ի համբոյր սրբութեան. եւ որք ոչ էք կարող հաղորդել աստուածային խորհրդոյս եւ առ դրունս էք, աղօթեցէք:

Եւ համբորեցեն զմիմեանս:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. Որ էնն Աստուած աստ բազմեցաւ: Խաղաղութեան ձայն հնչեցաւ. Սուրբ ողջունիս հրաման տուաւ: Եկեղեցիս մի անձն եղև, համբոյրս յօդ լրման տուաւ: Թշնամութիւնն հեռացաւ. Սէր ընդ հանուրս սփռեցաւ:

ՔԱՀԱՆԱՅՆ - Ահի կացցուք, երկիւղի կացցուք, բարութ կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Առ քեզ, Աստուած:

ՔԱՀԱՆԱՅՆ - Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Տեառնագրեցէ զինքն, եւ խաչակնքեցէ զժողովուրդն, ասելով.

ՔԱՀԱՆԱՅՆ - Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր **†** եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եղիցի ընդ ձեզ **✠** ընդ ամենեսեան:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ամէն. եւ ընդ հոգւոյ թում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղի:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

ՔԱՀԱՆԱՅՆ - Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտի:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Արժան եւ իրաւ:

Ձեռնամած աղօթեցէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Արժան է ստուգապէս եւ իրաւ ամենայորդոր փութով միշտ երկիր պագանելով՝ փառաւորել զքեզ, Հայր ամենակալ: Որ քոյին անզննելի եւ արարչակից Բանիւղ զանիծիցն բարձեր զկրճիմն:

Որ ժողովուրդ ինքեան առեալ զԵկեղեցի՝ սեպհականեաց զհաւատացեալս ի քեզ: Եւ զննելի բնութեամբ ըստ ի Կուսէն տնտեսութեան՝ հաճեցաւ բնակել ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար:

Վասն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այսպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

Ձերկոսին ձեռս եղեալ ի վերայ սկիոյ՝ ասացէ ի ձայն.

Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով՝ աղաղակել ընդ նոսին եւ ասել.

Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս: Օրհնեալ որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն. ովսաննա՛ ի բարձունս:



ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

Բազկատարած աղօթեաց ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Սուրբ եւ ճշմարտապէս եւ ամենասուրբ, եւ ո՛վ որ պանծասցի բովանդակել բանիւ զքո ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս: Որ եւ անդէն իսկ ի նախնումն, զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր. մարգարէիք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ եւ ստուերակերպ երնչոցն մատուցմամբ: Իսկ ի վախճան ատուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զՈրդիդ քո Միածին՝ պարտապան եւ պարտս, զենումն եւ օծեալ, գառն եւ երկնատր հաց, քահանայապետ եւ պատարագ: Վասն զի ինքն է բաշխող եւ նոյն ինքն բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս: Վասն զի եղեալ հաւաստեալ եւ առանց ցնորից մարդ, եւ անշփոթ միութեամբ մարմնացեալ յԱստուածածին եւ ի սուրբ Կուսէն Մարիամայ, ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս՝ առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյց եւ յառիթն փրկութեան մերոյ՝ եկեալ կամաւ ի խաչն:

Աստէն պարապեացի վայր մի ի հոգեւոր խորհրդածութիւնս. ապա առեալ զնշխարն խաչակնքեաց, եւ ամբարձցէ զաչն ի խաչելութիւն՝ ասելով .

Առեալ զհացն ի սուրբ, յաստուածային, յանմահ, յանարատ եւ յարարչագործ ձեռս իւր, օրհնեաց, **†** զոհացաւ, եբեկ, ետ իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Երկորումքք ձեռօք կալեալ զնշխարն՝ կորացի սակաւիկ մի, եւ ասացէ ի ձայն.

Առէ՛ք, կերէ՛ք,
այս է Մարմին իմ,
որ վասն ձեր եւ բազմաց բաշխի,
ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

ՄՊԱՏԱՒՈՐՆ - Ամէն:

Եղեալ զսուրբ մարմինն ի մաղզմայն՝ երկրպագէ, ապա բացեալ զբաժակն եւ կաղեալ՝ խաչակնքեաց, եւ ասացէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ -- Նոյնպէս եւ զբաժակն առեալ, օրհնեաց **†** զոհացաւ, էարբ, ետ իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Կալեալ զսկիին եւ կորացեալ սակաւ ինչ, ասացէ ի ձայն.

Արբէ՛ք
ի սմանէ ամենեքեան.
այս է Արին իմ՝ նորոյ ուխտի,
որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի,
ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

ՄՊԱՏԱՒՈՐՆ - Ամէն:

Եղեալ զսկիին ի վայր՝ երկրպագէ. եւ առեալ զմազմայն՝ դիցէ ի վերայ բաժակին, ասելով ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո Միածին: Եւ իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ: Եւ զնիգս դժոխացն աղարտեալ հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած, զԱստուածդ կենդանեաց եւ մեռելոց:

Երկրորմբք ձեռօք բարձրացուցեալ դոյզն ինչ գնուէրսն, ձեացուցէ նոքօք ի վերայ մարմնակալին՝ ասելով ի ցած.

Եւ արդ՝ մեք, Տէր, ըստ այսմ հրամանատութեան՝ յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան Միածնի քոյ, յիշեմք զդորա՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենդանատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս համբարձումն, զնստիլն ընդ աջմէ քո, Հայր, զահաւոր եւ զփառաւորեալ, զմիսանգամ գալուստն խոստովանիմք եւ օրհնեմք:

Ընծայեցէ ի ձայն.

Եւ զքոյս ի քոյոցս քեզ մատուցանենք, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

ՄՊԱՏԱՒՈՐՆ - Յամենայնի օրհնեալ եւ, Տէր. օրհնեմք զքեզ, զովեմք զքեզ. զոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր:

Եղեալ զկիին ի վար եւ զմաղզմայն՝ կափուցէ զբաժակն, եւ տարածեցէ զձեռս եւ աղօթեցէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Ջքեզ արդարեւ, Տէր Աստուած մեր, զովեմք եւ զքէն զոհանամք հանապազ: Որ զանց արարեր զներով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց՝ յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ եւ արեան Միածնի քոյ Տեսառնդ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ձձեռս շուրջ ածեալ զընծայիք, խաչակնքեցէ զժողովուրդն, ասելով ի ձայն.

Իտաղաղութիւն ք զ ամենեցուն:

ՄՊԱՏԱՒՈՐՆ - Եւ ընդ հոգւոյդ քում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուծոյ երկրպագեացուք:

ՄՊԱՏԱՒՈՐՆ - Առաջի քո, Տէր:

Երիցս համբուրեցէ զսեղանն՝ ասելով ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Երկիր պագանեմք եւ աղաչեմք եւ խնդրեմք ի քէն, բարերար Աստուած, առաքեա՛ ի մեզ եւ յառաջի եղեալ յընծայս յայս՝ զմշտնջենաւորակից քո եւ զէակից սուրբ Հոգիդ:

Եւ առեալ ի ձայն զմաղզմայն, խաչակնքեցէ զսուրբ մարմինն՝ ասելով.

Որով զհացս օրհնեալ՝ **†** մարմին ճշմարտապէս արասցես Տեսառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եղեալ զմաղզմայն ի վայր, բացցէ զկիին եւ նոյպէս խաչակնքեցէ զսուրբ արիւնն՝ ասելով.

Եւ զբաժակս օրհնեալ՝ **†** արիւն ստուգապէս արասցես Տեսառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եղեալ զմաղզմայն ի վերայ բաժակին՝ խաչակնքեցէ զնուէրսն, ասացէ.

Որով զհասց եւ զգինիս օրհնեալ՝ † մարմին եւ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգւովդ քով սրբով:

Քարճացուցանելով զնուէրսն՝ ասասցէ ի ձայն.

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Տարածեալ զձեռս, աղօթեսցէ ի ծածուկ.

Սովաւ շնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ Եկեղեցոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւազաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:

Սովաւ եւ օրոց շնորհեա՛ զբարեխառնութիւն եւ անդոց զպտղաբերութիւն եւ ախտացելոց ի պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն:

Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալսն՝ զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւազունս եւ զբնաւ ուխտ Եկեղեցոյ քում սրբոյ, եւ զամենեսեան՝ որք յաշխարհական կարգէ զարս եւ զկանայս հաւատով վախճանեալս:

Ի ձայն.

Ընդ որս եւ մեզ այց արասցես, բարերար Աստուած, աղաչեմք:

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուածածնին սրբոյ Կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփանոսի նախավկային եւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին եւ ամենայն սրբոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

ա.

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնեալ, զովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ Տէրութեան Քրիստոսի

կամ Աստուածայայտնութեան Քրիստոսի

կամ Յայտնութեան Քրիստոսի

կամ Գալստեան Քրիստոսի

կամ Յարութեան Քրիստոսի

կամ Համբարձման Քրիստոսի

կամ Գալստեան Հոգւոյն Սրբոյ ի դասս առաքելոցն

կամ Պայծառակերպութեան Քրիստոսի

կամ Սուրբ Խաչին Քրիստոսի

կամ Ծննդեան Քրիստոսի

երկիր պագանեմք:

ՄՊԱՍՄԻՈՐՆ - Փառք Տէրութեան քոյ, Տէր:

- կամ Աստուածայայտնութեան քոյ, Տէր:
- կամ Յայտնութեան քոյ, Տէր:
- կամ Գալստեան քոյ, Տէր:
- կամ Յարութեան քոյ, Տէր:
- կամ Համբարձման քոյ, Տէր:
- կամ Գալստեան քոյ, Տէր:
- կամ Պայծառակերպութեան քոյ, Տէր:
- կամ Սուրբ Խաչի քոյ, Տէր:
- կամ Ծննդեան քոյ, Տէր:

բ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Սուրբ եւ աստուածահաճոյ

Մարգարէին(ից), Ա.Ա.,

կամ Առաքելոյն(լոց), Ա.Ա.,

կամ Հայրապետին(տաց), Ա.Ա.,

կամ Վարդապետին(տաց), Ա.Ա.,

կամ Մարտիրոսին(սաց), Ա.Ա.,

կամ Ճգնաւորին(րաց), Ա.Ա.,

կամ Կուսին(սանաց), Ա.Ա.,

կամ Թագաւորին(րաց), Ա.Ա.,

կամ Զօրականին(նաց), Ա.Ա.,

կամ Հրեշտակին(կաց), Ա.Ա.,

որոյ (որոց) այսօր գլխատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

ՍՊԱՏԱՌԸ - Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

Ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ գտորք, կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի քոյ, եւ ազատեցեր խաչին սրբով. շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն:

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Ի ձայն

Եւս առաւել զՍրբագան Պապն մեր զՏէր **Ա.Ա.** Քահանայապետ, եւ զԳերերջանիկ Պատրիարքն մեր զՏէր **Ա.Ա.** Կաթողիկոս, եւ զԵրջանիկ Առաջնորդն մեր զՏէր **Ա.Ա.** (Արք)Եպիսկոպոս: Ծնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս՝ ուղիղ վարդապետութեամբ:

Ի ծածուկ.

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զքո առաջի կացեալ ժողովուրդս եւ զպատարագիս մատուցողս, եւ պարգևեա՛ սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն:

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ օրհնեա՛ զուխտատրս եւ զպտղաբերիչս Եկեղեցոյ քոյ սրբոյ, եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. եւ հատո՛ նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան քոյ՝ հարիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումդ:

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛, եւ զթա՛ ի հոգիս հանգուցելոցն, հանգո՛ զնոսին եւ լուսաւորեա՛, եւ դասաւորեա՛ ընդ սուրբս քո՝ յարքայութեանդ երկնից, եւ արժանի արա՛ ողորմութիւն քում:

ա.

Եթե կենդանի իցէ Ի ծածուկ.

Յիշեա՛, Տէր, եւ զծառայ (զծառայս) [կամ զաղախին (զաղախնայս)] քո Ա.Ա. եւ ողորմեա՛ նմա (նոցա) ըստ մեծի ողորմութեան քում, եւ փրկեա՛ զնա (զնոսա) յամենայն որոգայթից հոգոյ եւ մարմնոյ:

բ.

Իսկ եթէ ննջեցեալ իցէ.

Յիշեա՛, Տէր, եւ զհոգի ծառայի (ծառայից) [կամ աղախնոյ (աղախնանց)] քոյ (քոց) Ա.Ա. եւ ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան քում, եւ հանգո՛ւ այցելութեամբ ի լոյս երեսաց քոց:

Յիշեա՛, Տէր, եւ զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս եւ զհանգուցեալս. կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա եւ զմերս՝ ընդ ուղղորդն, եւ որ լին է փրկութեամբ: Եւ վարձատրեա՛ քոյորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսդ:

Եւ զտեալ զխորհուրդս մեր, տաճարացո՞յ յընդունակութիւն մարմնոյ եւ արեան Միածնի քոյ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում քեզ Հօր ամենակալի, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից.

Ձձեռս շուրջ ածեալ զընծայիք, խաչակնքեսցէ զժողովորդն, ասելով ի ձայն.

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ընդ ձեզ, ք ընդ ամենեսեան:

ՄՊԱՍՏԻՈՐՆ - Ամէն եւ ընդ հոգոյդ քում:

Տարածեալ զձեռս ասացէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուած՝ ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, զոհանամք զքէն, որ ի վեր քան զերանելի նահապետացն՝ զմեր պարտատրելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասնզի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ հայր հաճեցար անուանել զթալով: Եւ այժմ, Տէր, աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ւ ի մէջ Եկեղեցոյ քոյ սրբոյ:

Ի ձայն

Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնատրդ Հայր, երգել եւ ասել.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի:

Ձիաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ:

Ձձեռս շուրջ ածեալ զընծայիք, խաչակնքեսցէ զժողովորդն, ասելով.

Ձի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաիտեանսդ. ամէն:

ԻՍաղաղութիւն ք ամենեցուն:

ՄՊԱՍՏԻՈՐՆ - Եւ ընդ հոգոյդ քում:

ՔԱՀԱՆԱՅՆ - Աստուծոյ երկրպագեացոյ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Առաջի քո, Տէր:

խոնարհեսցի եւ ամենայն ժողովորդն ընդ նմա ի վայր. եւ աղօթեսցէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Որ աղբիւրդ ես կենաց եւ բղխումն ողորմութեան, Հոգիդ սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն աստուածութեանդ քոյ: Պահեա՛ զսոսա ամբողջս. տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի՝ առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

Յրիցս հաբորեսցէ զսեղանն, երկրպագեսցէ եւ ասացէ ի ձայն.

Քրիստոսի Յիսուսի Տերամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Պոսխում:

Կալեալ զսուրբ նշխարն, վերացուցէ, ասելով.

ՔԱՀԱՆԱՅՆ - Ի սրբութիւն սրբոց:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ամէն:

Ձսուրբ մարմինն եղեալ ի վայր եւ բացեալ զբաժակն՝ նոյնպէս վերացուցէ եւ զսուրբ արիւնն, ասելով ի ձայն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ՄՊԱՏԱԻՈՐՆ - Ամէն: Հայր Սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ: Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն: Այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Աղօթեսցէ ի ծածուկ.

ՔԱՀԱՆԱՅՆ - Նայեա՛ց, Տէր մեր Յիսուս Քրիստոս, յերկնից ի սրբութենէ քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ: Ե՛կ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա՛ տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ՝ եւ ի պատուական յարենէ. եւ ի ձեռս մեր՝ ամենայն ժողովրդեանս:

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ եւ համբորեսցէ զսեղանն, եւ առեալ զսուրբ մարմինն՝ ողջ թացցէ յանապական արիւնն, եւ ասացէ ի ծածուկ.

Տէ՛ր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն Միածնի Որդւոյ քոյ քրիստոնէայս, եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր աւագանաւն ի թողութիւն մեղաց, եւ արժանի արարեր զմեզ հաղորդել սուրբ մարմնոյ եւ արեան Միածնի քոյ: Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր, արա՛ զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս՝ մեզ ի

մեղաց թողութիւն: Եւ գոհութեամբ փառատրել զքեզ ընդ Որդոյ եւ սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ, եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Բարձրացուցէ զսուրբ մարմինն եւ զարինն ակներեւ ժողովրդեանն, եւ ասացէ առ նոսա բարձր.

Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ եւ յարենէ՛ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից՝ բաշխի ի միջի մերում: Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէ՛ք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի ի կառս քերովբէականս:

ՄՊԱՍԱՒՈՐՆ - Օրհնեալ է Աստուած:

*Ջսուրք նշխարն բեկեալ յերկուս մասունս, զաջոյ ձեռինն դիցէ ի մաղզմայն՝
ասելով ի ծածուկ.*

ՔԱՀԱՆԱՅՆ - Ջո՛ր օրհնութիւն, կամ զո՛ր գոհութիւն ի վերայ հացիս եւ բաժակիս ասացուք. այլ, Յիսու՛ս, զքեզ միայն օրհնենք՝ հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

*Դարձեալ բեկեալ զայլ միս փոքրիկ մասն ի մասնէն՝ որ ի ձախու ձեռին,
զմեծն դիցէ ի մաղզմայն, ասելով ի ծածուկ.*

Խոստովանիմ եւ հաւատամ, զի դու եւ Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեղս աշխարհի:

Ջփոքրիկ արկցէ խաչանիշ ի բաժակն, ասելով.

Լրումն † Հոգւոյն սրբոյ:

Երկրպագէ եւ ձախու մատամբք կալեալ զսուրբ մասն ի վերայ մաղզմային ասացէ.

Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ Միածնի քոյ, եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգեւոր աւազանին: Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս՝ մեզ ի մեղաց թողութիւն: Տպաւորեա՛ ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ որպէս ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի: Եւ արդ՝ Տէր, Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեա՛ ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց: Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ. եւ մի՛ արգելուր զշնորհս Հոգւոյդ սրբոյ:

Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քոյ, պարգեւեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց. որպէս խոստացաւ եւ ասաց Տէր մեր Յիսուս Քրիստոս, թէ՛ որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարին իմ, կեցցէ յաիտեան: Արդ՝ արա՛ զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Կարող է աղօթել.

Գոհանամ զքէն, Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդել սուրբ մարմնոյ եւ արեան քոյ: Եւ այժմ աղաչեմ զքեզ, մի՛ լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ, եւ ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան, որպէս զի սրբեսցէ սս զշունչս իմ, զհոգի եւ զմարմին իմ, եւ արասցէ զիս տաճար եւ բնակարան ամենասուրբ

Երրորդութեանդ: Ձի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաորել գրեզ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ՝ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Կարող է եւս աղօթել Յովհաննու Ոսկեբերանին.

Գոհանամ եւ մեծացուցանեմ եւ փառաորեմ գրեզ, Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւորս յայսմիկ հաղորդակից լինել աստուածային եւ սոսկալի խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ եւ պատուական արեանդ: Վասն այսորիկ զսոսա ի բարեխօսութիւն ունելով՝ աղաչեմ, զամենայն աւորս եւ ի ժամանակս կենաց իմոց՝ ընդ սրբութեան քոյ պահեա՛ զիս. որպէսզի յիշելով զբարեգթութիւնս քո, եւ կենդանի լինել ընդ քեզ՝ որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար: Մի՛ մերձեսցի, Տէր իմ եւ Աստուած, խորտակիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով: Ամենակարող, մաքրեա՛ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց՝ որ միայնդ եւ անմեղ: Ամբացո՛ զկեանս իմ, Տէր, յամենայն փորձութենէ, եւ զպատերազմողն իմ դարձո՛ յետս պատկառեալ եւ ամաչեցեալ, որչափ յառնէ ի վերայ իմ: Ամբացո՛ զզնացս մտաց եւ լեզուի իմոյ եւ զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ: Լէր հանապազորդ ընդ իս՝ ըստ անուտ խոստմանց քոց, թէ՛ Որ ուտէ զմարմին իմ, եւ ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեցէ, եւ ես՝ ի նմա: Դու ասացեր, մարդասէր. կացո՛ զբանս աստուածային անխոժանելի հրամանաց քոց: Քանզի դու եւս Աստուած ողորմութեան եւ գթութեան եւ մարդասիրութեան, եւ պարզելիչ ամենայն բարեաց. եւ քեզ վայելէ փառք՝ հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւոյդ՝ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ձուորք մասնիկն եղեալ ի մաղզմայն՝ երկրպագէ, եւ դարձեալ առեալ զսուրբ մասունս յայ ձեռն ի վերայ մաղզմայի, եւ երկրպագեալ՝ խնդրեսցէ վայրիկ մի սրտի միայն զպէսպէս հայցուածս, եւ տեսնագրեալ նովա զինքն ի վերայ մաղզմայի՝ ճաշակեսցէ ահիւ եւ դողութեամբ, ասելով ի ձայն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Մարմին քո անապական լիցի **†** ինձ ի կեանս:

ՄՊԱՍԱՌՈՐՆ - Ամէն:

Ձեռնամած կանգուն կացցէ վայրիկ մի. ապա բացցէ զբաժակն եւ երկրպագէ եւ զսուրբ փշրանս՝ որ ի մաղզմայն, ժողովեսցէ ի բաժակն, եւ տեսնագրեալ նովա զդէմսն՝ արբցէ ասելով.

ՔԱՀԱՆԱՅՆ - Եւ սուրբ արիւն քո՝ ի քաւութիւն **†** եւ ի թողութիւն մեղաց:

ՄՊԱՍԱՌՈՐՆ - Ամէն:

ՄՊԱՍԱՌՈՐՆ - Երկիրիս եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարոր:

ՔԱՀԱՆԱՅՆ - Հաւատամք ի Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:

ՄՊԱՍԱՌՈՐՆ - Ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Հաւատամք յՈրդին սուրբ Աստուած ճշմարիտ:

ՄՊԱՍԱՌՈՐՆ - Ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Հաւատամք ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ:

ՄՊԱՍԱՌՈՐՆ - Ամէն:

ՔԱՀԱՆԱՅՆ - Խոստովանիմք եւ հաւատամք՝ զի սա է ճշմարիտ մարմին եւ արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բառնայ զմեղս աշխարհի:

Հաղորդեսցէ զարժանատրսն՝ ասելով.

Մարմին եւ Արիւն Տեառն մերոյ **†** Յիսուսի Քրիստոսի:

Իսկ յաարտ բաշխման յաերու.

Լիցի ձեզ ի քաութիւն եւ ի թողութիւն մեղաց. ամէն:

ՄՊԱՄԱՌՐԸ - Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեսնի:

խաչակնքեսցէ զժողովորդն եւ ասասցէ ի ձայն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Կեցո՛ւ, Տէր, զժողովորդս քո, եւ օրհնեա՛՛ք զժառանգութիւնս քո, հովուեա՛ եւ բարձրացո՛՛ գոսսա՛՛ յայսմհետէ մինչեւ ի յաիտեան:

Ապա արբեալ զգինին որ ի բաժակի՝ սրբեսցէ սրբչաւ զմաղզմայն, եւ ի ձախ եղջեր սեղանոյ լուացեալ զմատունս՝ դարձցի ի մէջ սեղանոյ, եւ արբցէ ասելով ի ծածուկ.

Գոհանամք զքէն, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ՝ սուրբ զԵկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստո՛ն թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն՝ կենարար մարմնով եւ արեամբդ քով սրբով. շնորհեա՛՛ք քաութիւն եւ զմեծ զողորմութիւն: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Հոգի՛դ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զԵկեղեցի. անարատ պահեա՛՛ հաւատով Երրորդութեանդ՝ յայսմհետէ մինչեւ յաիտեան: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստո՛ն Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան: Սովիմք պահեա՛՛ զմեզ սուրբս եւ անարատս, բնակեալ զմեօք՝ քո աստուածային խնամովքդ: Հովուեա՛՛ զմեզ յանդատանի կամաց քոց սրբոց եւ բարեսիրաց, որով ամբացեալք յամենայն բանասրկուին ընդդիմութեանց, քումդ եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի, եւ քեզ միայնոյ քաջայայտք եւ ճշմարիտ Հովուիդ հետեւել, եւ առ ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Աստուած մեր եւ Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ եւ օրհնեալ՝ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ՝ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Սրբեալ զշրթունս իւր եւ զկրիստոս սրբեսցէ, եւ ի ծածուկ ձայն ասասցէ.

Խաղաղութիւն ընդ ամենեցուն:

Անքննին, անհաս, երբեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունող եւ անբաժանելի միասնական սուրբ Երրորդութեանդ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ապա համբուրեալ զսեղանն եւ տարածեալ զձեռս՝ ասասցէ ի ձայն.

ՔԱՀԱՆԱՅՆ - Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Կեցո՛ւ զժողովորդս քո, եւ օրհնեա՛՛ զժառանգութիւնս քո: Զլրումն Եկեղեցւոյ քոյ պահեա՛՛: Սրբեա՛՛ գոսսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ:

Դու զմեզ փառաւորեա՛՛ աստուածային զօրութեամբ քով. եւ մի՛ թողուր զյուսացեալքս ի քեզ: Զխաղաղութիւն քո պարգեւեա՛՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս:

Ձի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ եւն իջեալ առ ի քէն, որ եւ Հայրդ լուսոյ: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ՄՊԱՏԱՌՐՆ - Ամէն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմիտէ մինչեւ յաիտեան: Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմիտէ մինչեւ յաիտեան: Եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմիտէ մինչեւ յաիտեան:

ՔԱՀԱՆԱՅՆ - Կատարումն օրինաց եւ մարգարէից՝ դու եւ, Քրիստոն Աստուած փրկիչ մեր: Որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս քո, լցո՛ւ եւ զմեզ Հոգւովդ քով սրբով:

Հոգւոյ(ւոցն) հանգուցելոյս(ւոցս), Քրիստոն Աստուած, արա հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց:

ՄԱՐԿԱՒԱԳՆ - Եւ եւս յաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն հանգուցեալ հոգոյս աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի զսա ընդ արդարսն դասեցէ եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր, կիցո եւ ողորմեա:

ՔԱՀԱՆԱՅՆ - Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա:

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ զթա քո արարչական սիրովդ ի հոգի հանգուցեալ ծառայի(ց) [(կամ աղախնոյ(նեայց)] քոյ (քոց) Ա.Ա.: Յիշեա յաւոր մեծի զալստեան արքայութեան քոյ. արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Ձի դու եւ Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ՄՊԱՏԱՌՐՆ - Սուրբ յաչիս աղաչեսցուք զՏէր, զի սովա փրկեցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՔԱՀԱՆԱՅՆ - Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ եւ օրնեա՛ զժողովորդս քո, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական յաչիւղ քով ի յաղաղութեան: Փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն: Արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ՝ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ՄՊԱՏԱՌՐՆ - Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Խաչակնքեցէ զժողովորդն ասելով՝.

ՔԱՀԱՆԱՅՆ - Օրհնեալք չ եղերոք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք յաղաղութեամբ եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան. ամէն:

Յետ արձակման պատարագին՝ համբուրեցէ զսեղանն ասելով ի ցած.

Տէր Աստուած, Յիսուս Քրիստոս, ողորմեա՛ ինձ:

Եւ մտեալ յաւանդատունն, մերկանայ ի զգեստոցն, զայ առաջի սեղանոյն, երկրպագէ երիցս, եւ երթայ յաղաղութեամբ:



